ժողովրդական բանաստեղծական գրականութեամբ կարելի է պատմութիւն գրել[1]: Բանահիւսութիւնը ժողովրդական կեանքի հայելին է, որի մէջ անդրադարձել է ժողովրդական կեանքը իւր էութեամբ: Նշանաւոր է այդ կողմից մանաւանդ ժողովրդական վէպը, որ թէ անցեալի և թէ ներկայի պատմութեան աղբիւր է: Վէպը դարերի ընթացքում թէև փոփոխւում է, բայց և պահպանում է անցեալ դարերի դրոշմը, ուստի և գտնւում են շատ անգամ հնութեան հետքեր, որոնց ուսումնասիրութիւնը լուսաբանում է պատմական այս կամ այն հարցը: Ժողովրդական վէպի թեթև ուսումնասիրութիւնն իսկ մեզ տանում է պատմութեան միջին և աւելի հեռու շրջանները: Վէպի մէջ երևում է պատմական կեանքի զարգացման աստիճանները, ժողովրդի առօրեայ զբաղմունքները, հաւատալիքները, մնոտիապաշտութիւնը: Վէպի մէջ ենք տեսնում անհատի կեանքի փոփոխութիւնները՝ ծննդեան օրերից մինչև գերեզման իջնելը: Վէպով կամ այլ ստեղծագործութիւններով կարելի է չափել ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը, որովհետև այնտեղ են ամփոփուած նորա պատմութեան, բարոյականութեան, կեանքի փիլիսոփայութեան սաղմերն ու եզրակացութիւնները:

Պատմական երևոյթների այս կամ այն ուղղութիւն ստանալը մեծ կախումն ունի ժողովրդական տարրից, ուրեմն երևոյթը հասկանալու համար ուսումնասիրութեան առարկայ պիտի դարձնենք և հասարակ ժողովուրդը: Պատմութիւնը ազգի քաղաքակրթութեան աստիճանաբար զարգացումն է նկարագրում, իսկ առանց ժողովրդի ծանօթութեան անկարող ենք իմանալ, թէ ի՞նչ յառաջադիմութիւն է արել քաղաքակրթութիւնը ամբողջութեան մէջ, որի հիմքը հասարակ ժողովուրդն է: Ծանօթանալով ժողովրդի առօրեայ կեանքի, նիստ ու կացի, սովորութիւնների, կրօնական-բարոյական գաղափարների և այլ հայեացքների հետ՝ ընդունակ կըլինինք որոշելու ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը:

---

[1]) Изъ Исторіи романа и повѣсти—Сборникъ отдѣленія русск. языка и словесн. Имп. Акад. Наукъ.